

85

Վ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ

ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՐՄԱՆ

ԹԻՊԻԳԻԿ ԱԿՆԱՐԿ

Հրատ.

Հ. Յ. Դաշնակցութեան

1924

ԺՇՆԵՎ,

Արքայի բարեկարգության
շնորհած պատվիրակության
Հ. ԽԱՍՏԱՐԴԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ
բարեկարգության

ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԿՈՐՄՈՆ

ԹՈՒԹՈՒԹԻՒՆ ԱՐԴԱՐԿ

Հայաստանը, որ ճարդ կազմակերպությունները, պարագաները և բարեկարգության գործադիր աշխատավորությունը առաջ են գալիք։ Անդունք պարագաների առաջ գալու ակտուալ աղքատություններն առաջ են գալիք։ Հայաստանը՝ 1924

Հ. Տ. Գ. Գաշինակցութեան

ԺԲՆԵՎ,

ପ୍ରମାଣିତ କରିବାରେ

ସେବାରେ କରିବାରେ

ପ୍ରମାଣିତ କରିବାରେ

କରିବାରେ

କରିବାରେ

କରିବାରେ

କରିବାରେ

— 9 —

մասունքուր պատճառական մեջըն առաջ առնաւզով առնի ։ Այսուհետու առար մաս ու ամպամամալիքու բարուուր և պատը առելու մաժամայ բախաշահամարեան մազը առնար ուստահամայստու ցմագառականամի մազը առնար եարդ էլոյի պամմամելուոր մեջեւոյ ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ

(Տեսական հիմնաւորման

թուոցիկ ակնարկ)

1848. ին , սրանից , ուրեմն , ընդամէնը 76
առարի առաջ , Մարգան ու էնդէլսը «կոմմու-
նիստական Մանիքէստա-ի մէջ շփոթելով հայ-
րենիքի և ազգութեան հետ կապուած մի շարք
գաղափարներ , գրում էին , ի միջի այլոց . հե-
տեւեալը .

«Կոմմունիստներին մեղադրում են նաև
նրա մէջ , քէ նրանք կամենում են ոչնչացնել
հայրենիքը , ազգութիւնը , Քանուորները հայրե-
նիք ջունեն : Նրանցից չի կարելի խլել այն , ինչ
նրանք ջունեն : Անկասկած պրոլետարիատը
պէտք է նախ եւ առաջ տիրանայ քաղաքական
բովանդակ իշխանութեան , նասնի ազգային գե-
րիշխան դասակարգի բարձրութեան եւ ինքն
իրեն կազմակերպի իբրեւ ազգ . — եւ այս ի-
մաստով նա տակալին կապուած է ազգու-
թեան . Բայց ոչ բուրժուական իմաստով :

«Արդէն բուրժուազիայի զարգացումն ինքնին , ազատ առենտուրը , համաշխարհայնացումը եւ արտադրող արդինաբերութեան եւ նրան համապատասխանող գոյուրեան պայմանների միանմանութիւնը աստիճանաբար ոչնչացնում են ազգուրինների միջեւ եղած սահմանագծումներն ու հակամարտութիւնները» : *)

Այս կտորի մէջ արծարծուած մտքերով Մարքսն ու Էնգլէլը ուզում էին ասել , «Ո երբ համամարդկային բնկերվար ուսմունքը պրոլետարիատի պայքարի դնով իր վերջնական յաղթանակը տօնէ , այն ժամանակ այլևս պասակարգալին» ազգութեան մասին խօսք չի լինի և ապագայ մարդկութիւնն ու հասարակակարգը կ'ունենան ապադասակարգալին , ապազդային , որ ասել է՝ համամարդկային բնոյթ ու կերպարանք . Այս տեսակէտը նրանք հիմնաւորում էին , ինչպէս տեսանք , նաև տընտեսական տուեալներով , յայտարարելով , թէ ազգային բաժանումներն ու հակամարտութիւններն արդիւնք են անխուսափելիօրէն կենտրոնացման ձգտող . իսկ այժմ բաժան-բաժան , ապակենտրոն ու մասնատուած տնտեղեանց :

Ուղղափառ և ամենազօր «կենտրոնացումը» յետագային պիտի զար ընդմիշտ խորա-

*) Karl Marx et F. Engels . «Le Manifeste Communiste» . Փարիզ . էջ 50 .

կելու տնտեսահան պատճէշները , ստեղծելու
մէկ կուռ , հզօր եւ ամբողջական տնտեսական
կառուցուածք , որի հարուածների տակ պիտի
դոլորշիանալին ամէն կարգի (ու նաև , ի հար-
կէ , ազգային) տարբերութիւններն ու հակա-
մարտութիւնները :

Այսպիսով , հայրենիքի հասկացողութիւնը ,
որ սկսւում է ո՛չ միայն տնտեսութեամբ ու
չի վերջանում միայն տնտեսութեամբ . աղ-
ութեան զաղախարը , որ ինքնին մի բաւա-
կան բարդ բնակութուրապատմական շա-
ղախն է ու չի պարփակւում Մարքս-էնդէլսեան
չոր ու ցամաք կոնցեպցիաների շրջանակում ,
—ահա այդ հասկացողութիւններն ու դաղա-
փարները դիտական սոցիալիզմի հիմնադիրնե-
րը կապեցին ժամանակաւոր կեանք ունեցող
անտեսակարգի հետ , այդ հասարակակարգի
մահուան հետ մէկտեղ նախատեսելով նաև
նրանց մահը :

Նոյն թուականին (1847) Մարքսը գրում է
իր «համբաւաւոր» ու թունալից յօդուածը ա-
ւըստրիական սլաւոնների մասին , դէմ արտա-
յայտուելով նրանց անկախութեան (եւ յատ-
կապէս չեխերի) նաև նրա համար , որ այդ ապ-
գերը 12—20 միլիոն միաձոլլ և կոմպակտ թիւ
չունեն , նա նախատեսնում էր , որ մօտակայ
համաշխարհալին պատերազմը պիտի պայ ու
պիտի սրբի բոլոր «խղճուկ» , «անօդնական» ,
«եզակիուխ» և «ռէակցիոն» ազգերը (սլաւոն-

ների հասցէին), հարթելով ճանապարհը հրազդաների և ուղղափառ պէտքարուսացման» առջեւ: Ու նա բնաւ չէր քաշւում թունալից հեղնանքով յայտարարելու թէ՝ երբ «ղոգման» պահանջում է զոհեր, ապա պիտի գնալ այդ զոհաբերութեան ու պիտի տրորել նաև «միքանի ազգային քնքուշ ծաղիկներ»:

1860 ին, սրանից, ուրեմն, ընդամէնը 64 տարի առաջ, նոյն Մարքսը օրհնում էր Գերմանիոյ պատերազմը Դանիոյ դէմ, նուիրագործելով պրուսացու «յեղափոխական» աշխարհակալութիւնը և ողջունելով փոքր Դանիոյ ոչնչացումը:

Մարքսի և էնդէլի անմիջական աշակերտներից Լիբկնեխտը (հայրը) 1892-ին, սըրանից, ուրեմն, ընդամէնը 32 տարի առաջ, Մարքսէյլում արտասանած իր նշանաւոր ճառի մէջ յայտարարում էր, որ մարքսիստները միան երկու ազգ գիտեն՝ կեղեգողների ու կեղեցւողների, որոնցից երկրորդին պատկանում են իրենք:

Եւ մինչև իսկ զգոյշ կառւցկին ազգութեան հարցին նուիրած իր անզրանիկ ուսումնասիրութեան մէջ (գժամանակակեց ազգութիւնն խորագրով) այն կարծիքն էր յայտնում, որ ազգութիւնը արհեստական կազմութիւն ունի, որ նա ծնունդ է մասնատիրական անտեսութեան և որ, հետեւաբար, այս տընաեւութեան վերացման հետ պիտի վերանան

նաև այդ մանր աղգերը , միանգամ ընդմիշտ հաւուելու համար խոշոր ու միաձոյլ միութիւնների մէջ :

Խոկ զեռ երէկ էր , որ հսկայած աւալ նուաստանի մէջ , մարքսիզմի ուղղափառ հետեւարդները , ուուս սոցիալ-դեմոկրատները , մանր աղգերի համար ապրելու ուրիշ շնորհ չաւնէին , բայց եթէ անգոյն , անմիս , անարիւն ու անորոշ «կուլտուրական ինքնավարութիւնը» : Առուսական մարքսիստական այս անցագիրը , պատրաստած փոքր աղգերի համար , «կուլտուրական ինքնավարութեան» սահմանից այն կողմը թոյլ չէր տալիս անցնելու նուսիոյ ստորադաս աղգերից զրեթէ ոչ մէկին :

Այսպէս—երէկ , ընդամէնը մի քանի ասանեակ առաջ :

Ու սակայն այսօր , ընկերվարական բազմանդակ աշխարհի մէջ , բոլոր երկրներում ու ամէն հորիզոնների տակ չէք գանի և ո՛չ մէկին . որ յանդգնէր բացայայտօրէն դէմ արտայայտուելու աղգութեանց ուրուն գոյութեան և նրանց անկախութեան երազին :

Այսպիսի ջախջախիչ լաղթանակ և այն էլ այսքան կարճ ժամանակաշրջանում չի վաստակել հանրային թերևս և ոչ մի գաղափար :

Աղգութեանց լաղթական երթի առջև ջախջախուած փռուած է մարքսեան չարագուշակ տեսութիւնը և նրա աւերակների վը-

բայ ալսօր խրոխա կեցուածքով ցցուած են
փոքը ազգութեանց ազատութեան և անկաշ-
խութեան մի շարք հրաշակերտ շէնքերը (ռա-
նակ . . . չեխերի) :

Համաշխարհալին պատերազմը պիտի գալ
ու պիտի սրբէր, ըստ Մարքսի նախատեսու-
թեան, բոլոր «խղճուկ», «անօգնական», «ե-
զագլուխ» ու «ռէակցիոն» ազգերն, պիտի
դար ձուլելու նրանց հզօրների ամենակուշ-
իառնարանում, սակայն այդ պատերազմը ե-
կաւ ու, հակառակ Մարքսի, սրբեց ու տա-
րաւ մեծերից շատերին, նրանց սրբազան ա-
ւերակների վրայ կառուցանելով «խղճուկնե-
րի» և «անօգնականների» ազատութեան հո-
յակապ կոթողը :

Ու մտածել թէ մինչև մեծ պատերազմը,
միայն Եւրոպայում, կային լիսուն եւ վեց ինք-
նիշխան երկրներ, իսկ այսօր, պատերազմից
յետոյ, այդ նոյն Եւրոպայում նրանց թիւը
հասնում է արդէն եօրանասուն եւ վեցի:

Այսպիսի ջախջախիչ յաղթանակ, մի ան-
գամ էլ կրկնենք, պատմութեան մզիչ աղ-
դակներից և ոչ մէկն այսքան արագօրէն թե-
րեւս չի տարել,

Այո՛, համարձակ կարելի է ասել, որ ըն-
կերպար մարդկութեան շարքերում չկայ ալլես
մէկը, որ արիութիւնն ունենայ բացնակատ
գէմ դուրս գալու ազգութեան գաղափարին;
չկայ մէկը, որ համարձակութիւնն ունենայ

ժխտելու ազգութեանց նուիրական տենչանքը , նրանց անկախութեան պահանջը :

Հարիւրաւորների անունները կարելի է յիշատակել . անվերջ էջեր զրաւելով , որոնք փոխադարձ մրցակցութեան մէջ են աւելի՝ յուղիչ , աւելի ազգու , աւելի՝ վեհ ու վառ խօսքերով հիմնաւորելու համար ազգութեանց յարատեռութեան գաղափարն ու նրանց նուիրական երազը՝ ապրել ազատ , ինքնիշխան եւ անկախ :

Տասնեակներով կարելի է թուել այնպիսի կուռ ու հզօր քաղաքական հոսանքներ , ուրոնք երէկ ժխտելով ժխտում էին այդ գաղափարները , իսկ այսօր պաշտպանելով պաշտպանութեան են և՝ ազգն ու ազգութիւնը , և՝ հայրենիքն ու նրա անկախութիւնը :

Բացալայտ հակառակորդներն ու թշնամրները մնացել են այն բանակում միախ , որ ընկած է մարդկութեան երազած հասարակակարգի այն կողմը , յառաջադիմութեան սահմաններից դուրս , յետադիմ ու մթին գաղափարների խաւար աշխարհում : Գծից այս կողմը գտնուած հակառակորդը պայքարում է այլևս ո՛չ ուղղամիտ , ո՛չ բացայալայտ , ո՛չ շիտակ ու բացնակատ ձեռվ , այլ քօղարկուած , կեղծ ու շպարուած վիճակի մէջ :

Մարքսեան յանդզնութիւնն այլևս չկայ , կարո՞ղ էք թուել մի այլ գաղափար , որի յաղթանակն այսքա՞ն վճռական , այսքա՞ն ան-

վերապահ ու վերջնական լինէր :

Կարո՞ղ էք յիշատակել արգեօք որևէ
ձգառում մարդկային պատմութեան մէջ, որի
առջեւ խուճապահար տեղատութիւնն արդքան
հոյակապ լինէր և այն էլ . . . այսքան կարճատե
չըանում :

Ենո երէկ, մի քանի տասնամեակ առաջ,
աղղութիւնն իր նորագոյն առումով խորթ էր,
անհաղորդ ու անհարազատ գիտութեան ու
պայքարող մարդկութեան մէկ ամբողջ հատ-
ուածին :

Ենո երէկ, մի քանի տարի, մի երկու
տասնամեակ առաջ, հեղնանք կարսղ էր յա-
րուցել անկախ երկրների այն հոյակապ վուն-
ջը, որ այսօր երկունքով, արիւնառատ պայ-
քարի և աննախընթաց փլուզումների գնավ
հիւսւում է գեղեցկօրէն հզօրների խնկելի ա-
ւերակների վրայ :

Աղղերը, որ XII-րդ դարից սկսած մի ա-
ռանձինն թափով կազմաւորւում ու գունա-
ւորում են մարդկային պատմութիւնը, այսօր
այլևս դարձած են այդ պատմութեան մղիչ ու
հոյակապ ազգակներից մէկը :

Այս բացայայտ նշմարտութիւնն ըմբռնե-
լու համար պէտք չկայ անպայման մարդկա-
յին պատմութեան բոլոր հատորները գիտնա-
լու :

Մաքի թռիչքով գծեցէք ձեր տեսողու-
թեան առջեւ աշխարհի քարտէզը երկու, մէկ

զար առաջ ու դուք պիտի տեսնէք, թէ այդ
քարտէղը որքա՞ն գունեղ, որքա՞ն երփնե-
րանգ է դարձել վերջին երկու հարիւրամեակ-
ների ու ժանաւանդ ՀԻՀ. ըդ դարու ընթաց-
քում։

Միթէ անխորհուրդ է այս հոյակապ երե-
ւոյթը։ Իմաստ չկա՞յ արդեօք այն շբեղ շարժ-
ման մէջ, որ դէպքից դէպք ու փաստից փաստ
գալիս է փայլ տալու մարգկային պատմու-
թեան։ Զէ՞ որ երկնաբեր չեն ազգերը ։ Հէ՞ որ
երկրածին են նրանք, մե՛ր մոլորակից ու մե՛ր
աշխարհից, խորարմատ ձեռվ ու տարրեր գոյ-
ներով ձգուած պատմութեան մէկ ծայրից
մինչև միւսը։

Երկու հակամարտ ու իրերամերժ գործօն-
ներ անընդհատ, անողոք ու արիւնալի պայ-
քարի մէջ են եզել փոխազարձարար ու պրե-
թէ պատմութեան ամբողջ տեսզութեան ըն-
թացքին։ Այդ երկջոկուած գործօններից մէկը
ձգտել է աէր կանգնել ամբողջ աշխարհին,
բոլոր սերանների մէջ մէկ լեզու գնել ու բո-
լոր ձեռքերի մէջ մէկ գրիչ պահել, տեսնել
աշխարհը, ողջ մարգկութիւնն ի՛ր լեզով խօ-
սելիս և ի՛ր աստուածներին երկրպագելիս։ Ու-
զրան զուզընթաց անել ու զարգացել է երկ-
րորդ գործօնը, տրամազծօքէն հակառակ առա-
ջինին, որ ձգտել է հնարիմաց բոլոր ձեերով
պահել պատմութեան ստեղծագործ ուժերը,
բոլոր լեզուներն ու բոլոր ազգային գոյները։

ամենքին իր սեփական անկիւնը տալով և
իւրաքանչիւրին ազատ պահելով հզօրների աշ-
խարհակալ ուսնձգութիւններից :

Դժուար չէ ասել, թէ այս պայքարը մըր-
ցակցող ուժերից ո՞ր մէկի յաղթանակով պի-
տի վերջանայ :

Այս հարցին պատասխանում է ինքը պատ-
մութիւնը :

Յանուն աշխարհակալութեան մզուած իւ-
րաքանչիւր մէկ նոր ու վիթխարի բաղխում,
յանուն նոր տիրապետութեան տարուած
իւրաքանչիւր մէկ պայքար, ամէն մէկ բռո-
նակալ ձգուամ տիրանալու նորանոր երկրների
ու ստրկութեան մատնելու համար նոր ու ա-
զատ ժողովրդների՝ վերջացել ու վերջանում
են ստորագաս ժողովրդների անակնկալ ազա-
տութեան դնով :

Ու պիտի վերջանան այդպէս :

Որովհետեւ անկարելի է ճշմարիտ խաղա-
ղութիւն հաստատել մեր մոլորակի վրայ, ե-
թէ մինչեւ իսկ բովանդակ տիեզերքը սեփա-
կանութիւնը դառնայ միրայն երկու մեծ ու
հզօր աղքերի, Ռով կարող է կասկածել, որ
հզօրութեան գաղանի ծալքերի տակ թագնը-
ւած անհանգիստ, անյագ ու արիւնոռուշտոր-
դըն այս երկու ուժերը գուրս չպիտի բերի
մէկ նոր ու ահեղ պայքարի՝ յանուն միայն
մէկի անսանձ, անսահման, անմըրցակից տի-
րապետութեան :

Խորամուխ եղէք պատմութեան ներքին

իմաստի մէջ, փորձեցէք լսել նրա սրբազան ձայնը, հասկանալ այն խորհուրդը, որ իր մէջ կրում է անազատ ազգութեանց կանթեազակիք պայքարը ու դուք պիտի տեսնէք, որ ուրիշ ընթացք, զարգացման այլ ուղի մարդկային պատմութիւնը չտևնի:

Համայն աշխարհը կամ պիտի թռղնել միայն մէկին, կամ բոլորը տէր պիտի կանգնեն այն ստացուածքին—նիւթական ու ոչնիւթական—որ ազգերը կուտակել են անյիշատակ ժամանակներից սկսած:

Կամ գարշ բռնակալութիւնը—այս կամ այն գունի ատկ քօղարկուած—իր աւարդ հովանին պիտի տարածի տիեզերքի բոլոր ցամաքների ու բոլոր ջրերի վրայ, կամ ազատութեան արեւ հաւասարապէս պիտի լուսաւորի ազգերի—ու անխափ նրանց բոլորի—ազատ ու անկախ հայրենիքները:

Ու պատմութիւնն ահա այս վերջին ճանապարհով է գնում:

Անկարելի է երեակայել աւելի հզօր, աւելի անդադահարելի, աւելի յամտու ու տեւական մէկ ոյժ, քան ազատութեան տենչն է: Նրա մահացու հարուածներին չգիմացաւ եւ ոչ մէկ աշխարհակալ, որովհետև և՛ ոչ մէկը բռնաւորներից չունեցաւ հրայրքոտ պայքարի այն անմար կրակն իր մէջ, ինչ ունի ազատութիւնը, նա բնատուք է ազգերին, ին քնածին ու ինքնաբուխ, նա հոգեկան այն անսպառ

գանձն է, որ փոխանցւում է զարերից-զար
ու սերնդից-սերունդ, առանց երեսէ իր հը-
մայքն ու թովշութիւնը կորցնելու :

Զոհերի և ոչ մէկ թիւ, արեան և' ոչ մէկ
քանակ, աւերածութեանց և' ոչ մէկ օրինակ
չի կարող ազգերն անջատել ազատութեան
կուռքից :

Եւ ինչո՞ւ հեռուներ գնալ :

Ահա ձեզ հայ ժողովուրդը, Նրա ամբողջ
պատմութիւնն անսպաս պայքարների մի ըն-
դարձակ մարտիրոսազրութիւն է . . . յանուն
ազատութեան : Բազմիցս հարուածուած, ծր-
ւատուած ու արիւնոտուած, նա վերստին ամ-
փոփել է իր ցիրցան ուժերն ու լարուած հի-
զերով պարզել պայքարի դրօշը : Մոտ եօթ
զար է, ինչ ազատութեան արեւը մարել է
հայկական հողերի բոլոր մասերի վրայ:
Եօթ զար է, ինչ բանակալները փոխն ի
փոխ գալիս, իշխում, աւերում ու սրածում
են, ձգահեռվ քարը քարի վրայ չթողնել մեր
հայրենիքի մէջ :

Անվերջ սերունդներ եկել ու անցել են,
առանց ազատութեան շողը տեսնելու : Սա-
կայն և այնպէս ազատութեան տենչը երբեք
չի մարել մարտնչող հայութեան հոգում : Ու
մինչեւ իսկ այսօր, երբ նա բնաջնջուած է գը-
րեթէ իր մէկ հատուածով, երբ աւերակ է նը-
րա հայրենիքն ու օտարութեան ափերը դար-
ձած են իր անհաստատ կայանը, ահա մինչեւ

իսկ այսօր չի խորտակուել նրա մէջ պայքարի ոգին, չի մարել ազատութեան կրակը :
Այսպէս են և միացած բոլոր ժողովուրդները :

Տարբեր չափերով, տակայն ամենքն անխափիր երկրագուն են այն մշտավառ կրակի, այն հզօր արքայի, որ ազատութիւն անունն է կրում :

Եւ այսօր այդ պայքարը տարւում է աշխատաւոր մարդկութեան լուսաւոր զաւանանքի, ընկերվարութեան դրօշի տակ :

Մեր յօդուածի սկզբում ասացինք, որ ընկերվարական վարդապետութիւնն իր հետեւորդների շարքերում մարդ չունի արձանագըրած, որ յանդգնէր բացայայտօրէն գէմ գուրսգալու ազգերի անկախութեան երազին :

Անվերագարձ կերպով պատմութեան սեփականութիւնն են դարձել այն հեղնայիշքանդուչանքները, որ էնդէլսու ու Մարքսը, ու մանաւանդ նրանց ոռւս հետեւորդները չարախինդօրէն նիւթել էին ազգութեանց և յաւկապէս նրանց անկախութեան երազանքների գէմ :

Ընկ երվարութիւնն ստոիճանաբար յղերւում, ճշտորոշում ու պարզում է, վերջնականապէս իւրացնելով ազգութեան և հայրենիքի գաղափարները և զարձնելով այն իր անբաժան մէկ մասը :

Եւ եթէ այսօր տակաւին կան ուժեր, ու

րոնք, պատսպարուած ընկերվարութեան դրօշի
տակ, անկարոզ են հաշտուել փոքր ժողովրդու
ների ազգային գատերի հետ, ապա գրանք այն
մեսնող ուժերն են, որոնք իրենց ժամանակա-
ւոր գոյութիւնը կարող են քարչ տալ միայն
ծպտեալ վիճակում ։ Այդ հոսանքներից և՛ ոչ
մէկն այլևս արիութիւնը չունի ընկերվարու-
թեան քղամիդն իր ուսերին առնելու և միա-
ժամանակ բացայայտօրէն ազգութեանց ան-
կախութեան դէմ խօսելու :

Ընկերվարութիւն, հայրենիք և ազգու-
թիւն, — այս գաղափարներն այլևս մէկ ան-
բաժան ամբողջութիւն գարձած են թէ՛ կեան-
քի ու թէ՛ տեսութեան աշխարհում :

Եւ այն հանգամանքը, որ ազգութեանց
դէմ նիւթած զաւերը ձնունդ են առնում
մթութեան մէջ, սարսափում լոյսից, ծածկը-
ւած մնում կեզդ ու պատիր խօսքերի տակ եւ
արտայայտում գողունի, խարդախ ձեւերով, —
այդ ինքնին արդէն մասնում է պայքարողի
յուսահատ դիրքերն ու նրա լիակատար պար-
տութեան անվերագարձ վճիռը :

Այսպիսով, ընկերվարական ուսմունքը, որ
իր սկզբնական շրջանին մարքսիզմի հզօր ազ-
գեցութեան տակ, ազգամերժ, անմիս ու ա-
նաբիւն զաւանանքն էր մարդկութեան մէկ
աննշան տակոսի, դօրձարանային բանուորու-
թեան, այսօր, կեանքի ու գիտութեան եր-
կաթեայ հարուածների տակ փոխել է իր բը-

նորիթը , փարթամացել իր ներքին էռոթեամբ
և դարձել աշխատաւոր բազմութիւնների հա-
սարակական դաւանանքը :

Այլևս վէճի խնդիր չէ . որ ընկերվարու-
թիւնը պիտի կրի ոչ միայն ինգուստրիէլ ,
գործարանային բնույթ , այլ և պիտի ունենայ
բացայայտորէն արտայայտուած երկրագործա-
կան կերպարանք :

Այս կը նշանակէ , որ ընկերվարութիւնն
իր յազմանակը պատրաստող ուժերի շար-
քում պիտի ունենայ ոչ միայն բանուորին ,
այլ և աշխատաւոր գիւղացուն . Այս կը նշա-
նակէ միաժամանակ , որ ընկերվարական ուս-
մունքը նպատակ պիտի ունենայ բոլորանը-
ւէր ձեռվ պաշտպանելու աշխատաւոր մարդ-
կութեան և ոչ միայն գործարանային բան-
ուորի շահերը :

Սակայն այս — հարցի միայն մէկ կողմն է :

Ընկերվարական վարդապետութիւնն ին-
դուստրիէլ ու երկրագործական լինելուց բա-
ցի , պիտի լինի նաև ազգային ձիչա այնպէս ,
ինչպէս դասակարգային հաւասարութեան ըս-
կը բունքը մէկն է ընկերվարութեան հիմնա-
կան պատգամներից . այդպէս նաև ազգերի
հաւասարութեան սկզբունքը նրա անջատ ու
անքաժան մասերից մէկը պիտի լինի :

Ընկերվարութիւնը , եթէ չի ծառանում
տիրող մասնատիրական կարգերի գէմ , եթէ
նա չի ձգտում դասակարգորէն շերտաւորուած

հասարակութիւնը մէկ ապադասակարգային ամբողջութեան վերածել, եթէ նա իր աըրամադրութեան տակ զանուած բոլոր դէնքերով չի պայքարում անտեսական այն բազմապիսի կեղեքումների դէմ, որոնց ենթարկուած է մարդկութեան մի մասը միւս մասի կողմից. եթէ ընկերվարութիւնն իրեն նպատակ չի դընում անտեսական հաւասարութեան սերզունքն իր առաւելագոյն սահմանների մէջ կիրառելու և՝ արտադրութեան և՝ բաշիման շրջանում, — ապա համարձակ կարող ենք ասել, որ մենք զործ ունենք մի վարդապետութեան հետ, որ, շահագործելով ընկերվարութեան զրօշը, իր հակարներվարական նպատակներն է իրագործում:

Իսկ եթէ պարզուի մէկ օր, որ ընկերվարութիւնն ոչ միայն պայքար չի տանում, այլ և իրացնում ու հաշտուում է դասակարգային շերտաւորման հետ, եթէ լինի այնպէս, որ ընկերվարական ուսմունքը կարողանայ անխռով ապրել անտեսական կեղեքումների իշխող ձեւերի հետ. եթէ նա չծառանայ անտեսական այն այլանդակ անհաւասարութեան դէմ, որ սկսում է արտադրութեան աշխարհում և վերջանում բաշխման աշխարհով. — ապա պայքառ պիտի բանալ հէնց իրե՞ն՝ ընկերվարութեան դէմ. բոլոր ուժերով պատռար կանգնելով նրա յաղթական երթի առջեւ :

միշտ նոյնը պիտի լիսի նաև ազգային
հարցի նկատմամբ :

Եթէ մարդկութեան երազած ապագայ
համարակակարգը նախապատրաստող աշխա-
տաքրորական մեծ վարդապետութիւնն իր տը-
րամադրութեան տակ եղած բոլոր զէնքերով
ու միջոցներով չի ծառանում ազգերի ճնշում-
ների դէմ, եթէ նա իր անվերաքննելի նպա-
տակներից մէկը չի յայտարարում ազգային
ազատութեան և հաւատարութեան սկզբունքը .
Եթէ նա չի ձռւլում ու նոյնանում ազգերի
անբոնադատ դրութեան ու նրանց ազատու-
թեան գաղափարների հետ, — ապա նու այս
դէպքում առանց վարանութիւն կարող ենք յայ-
տարարել, որ մենք դորձ ունենք մի վարդա-
պետութեան հետ, որ չահագործելով ընկեր-
վարութեան նուիրական գրոշը, իր հակարն-
կերվարական նպատակներն է հետապնդում :

Իսկ եթէ պարզուի մէկ օր, որ ընկեր-
վարութիւնն ոչ միայն անհաջա, բուռն ու
տեական պայքար չի տանում յանուն ազգա-
յին հաւատարութեան սկզբունքի, այլ և ա-
ջակցում է — բացայայտ կամ քօղարկուած ձե-
ւերով, իսուքով կամ գործով — ազգերի սար-
կութեան և ոչնչացման, — ապա առանց վայր-
կեան իսկ տատանուելու կոռուի սրբազան
հակատ պիտի բանալ ընկերվարութեան դէմ
և ձգտել նրա վերջնական, լիակատար ու վճա-
ռական խորտակման :

Որովհետեւ ի՞նչ է վերջ և վերջոյ ի՞նքը
ընկերվարութիւնը :

Ո՞րն է այն հիմնական առազգը, որ կա-
խարդական այնպիսի թովչութիւն է տալիս
այդ վարդապետութեան և անհամար բազ-
մութիւնները լծում տեական պայքարի :

Կարեռ' ըը, էականն ու յատկանշակա'նը,
ոգի'ն այս ուշմունքի, հիմնակա'ն սկզբունքը
նրա ո՞ւր պիտի որոնել արդեօք :

Անկասկած ոչ այն բառակոյտերի և ան-
թիւ ու անհամար բանաձեների մէջ, որ ըն-
կերվարութիւնն այնքան առատօքէն հրապա-
րակ դրեց :

Կեանքը բազմից եկաւ ցոյց տալու, որ
նա մէկ կամակատար ստրուկ չէ տեսութեան
քմահաճ կառուցուածքները գիւրութեամբ
մարսելու համար :

Գաղափարների իրականացման ճանապար-
հին խորտակուել և ընկել են տեսական բազ-
մաթիւ ու անթերի շէնքեր, որ այնքան դիւ-
րութեամբ կերտուել են մորի աշխարհում :

Եւ այս իմաստով միթէ՝ անխոցելի և ան-
պարտելի մնաց հէնց իւրն ընկերվարութիւնը :

Չմնաց, տարաբախտաբար :

Անթիւ էջեր կարելի է լիցնել այն ծանր
ու զաժան յուսախարութիւններով, այն մեծ
ու հոյակապ փլուզումներով, պարտութիւն-
ների ու մոլորութեանց այն ընդարձակ շղթա-
յով, որ դէպքից-դէպք, առիթից-առիթ ու

գործից-գործ հիւսուել է ընկերվարութեան
տեսական աշխարհում և քակուել գործնական
կեանքի մէջ։ Առաջարկած է այս գործութեան

Սւ ոչ միայն այն հին սրերին, երբ ընկերվարական միտքը ուստուպիական խանձարուրի մէջ էր տակաւին, և ոչ միայն երէկ ու տասնամեւակներ առաջ, երբ նա դարդարուած էր զիազականութեան շղարշով, այլ եւ այսօր, երբ իր պարտուած ու անարգուած վիճակում փորձ է անում, կորցնելով ամէն ինչ, գէթ իր անունը փրկելու։

Այո՛, ծանր են յատկապէս ընկերվարական տեսական մտքի ու դործնական կեանքի բաղիսումներն ու այդ բաղիսումներից ծնունդ առած յուսախամութիւնները։ Մի տարօրինակ լաւատեսութիւն ժառանգուեց մասնաւորաբար Մարգսից ու Էնգէլսից, եւ ժառանգեց յատկապէս մարգսիստական դպրոցը, Ենթադրեցին, թէ կապիտալիզմի պարտութեան եւ ընկերվարութեան յաղթանակի բոլոր դադանիքները պարզուած են արդէն և ԽIX-րդ դարի վախճանը պիտի պսակուի նոր հասարակակարգի հաստատումով։

Եզան խելօքներ մինչեւ իսկ, որոնք ամենայն մանրամասնութեամբ նկարագրեցին ապագայ կենցաղաձեկի բոլոր կողմերը՝ ընտանիքից մինչեւ դպրոց և հասարակական վարչատնից մինչեւ արդիւնաբերական ձեռնարկ։

Աւելին ավելի շատ առաջ առաջ առաջ առաջ առաջ
Մարքսիստական օբեկտիվիզմից բղխող
զուարթ ու անփոյթ լաւատեսութիւնն այս-
պէս թուաւաւորեց հաւատացեալների մտածո-
գութիւնը, որ շատերի համար աւելորդ նոր-
իատուից մինչև իսկ ապակայ հաւարակալար-
գի ընդհանուր կառուցուածքի էական կողմե-
գի քնտյթն, ու նկարագիրը կանխապեսելու-
պարասականութիւնը:

Երբ ընկերացին յեղափոխութեան դադ-
թանակը գայ, ինքնին սրդէն, զիւրութեամբ
և անմիջապէս, յարդարուն ու կատարուն ձե-
ւերով պիտի գայ և իրականացնակ նաև ընկեր-
վարութիւնը — ուրեմն էլ ինչո՞ւ ճէնց այսօր-
ուանից աւելորդ մտահագութեանց նորիրուել և
անտեղի եռ անգ սպառել, — ահա այսպէս էին
մտածում մարքսիստական օբեկտիվմով տա-
րուած լաւատեսներից շատերը, նրանք մինչև
իսկ աւելորդ էին գանում ընկերվար հասարա-
կակարգի կոնկրետ ձևերի ու կոնկրետ ար-
տայայտութիւնների մասին խօսելը
Ու ահա մի օր եկաւ յեղափոխութիւնը,
եկան յեղափոխութիւններն ու ջուր ցանեցին
այս վառ ցնորդների վրայ և այս մայմանը
կեանքը յանափա հիմնի վեր չըջեց շատ
բան այս կառուցուածքից, որ ընկերային մեծ
ավեսաբանները այնքան մեծ լաւատեսութեամբ
շակել յգեկել ու կերտել էին տեսութեան աշ-
խարհում:

Խսկապէս . ի՞նչ է իրենից ներկայացնում
ընկերվար մեծ վարդապետութիւնը . ին-
չի մէջ է նրա էռութիւնը , պատմական կո-
չումը , ուժն ու արժէքը . ո՞ւր է թագնուած
այդ վառ ու կենդանի ուսմունքի հմայքն ու
ազգեցութիւնը . Արդեօք գործնական կեանքի
մէջ նրա տեսական կառուցուածքի կրած ճար-
ճառումները շնո՞ն գալիս ասելու , որ յանցան-
քը տեսութեանն է և ոչ կեանքինը , որ մե-
ղաւորն ինքը ընկերվարութիւնն է , այդ ան-
հող ու ցնորածին ուսմունքը . և ոչ թէ ըն-
կերվարականը՝ այդ ուսմունքը կեանքի մէջ
ապիկարութէն և անձեռնհաս ձեռվ գործադրողը .
Ընկերվարութեան բառին ու տառին փարել .—
այդ կը նշանակէ անխուսափելիորէն դրական
պատասխաններ տալ մեր այս հարցումներին .
Բարեբախտաբար , սակայն , ընկերվա-
թեան էռութիւնը այդ բառերի ու խօսքերի
մէջ չէ :

Միանգամ ընդմիշտ պիտի ընդունել և
հարազատել այն անխոցելի ճշմարտութիւնը
թէ՝ ընկերվարութեան ուժը , հմայքն ու էռու-
թիւնը այն հիմնական սկզբունքի մէջ է , որ
լուսարձակի ձեռվ գէպի իրեն է քաշում աշ-
խատաւոր բազմութեանց որոնող հայեացքնե-
րը . և լուսաւորում նրանց տեսողութեան հե-
ռաւոր հորիզոնները :

Զգուել մէկ այնպիսի նասաբակակարգի , ուր տի-
րում է խսկական ազատութիւն , ուր չկայ որեւէ

ների կեղերում, ուր նշարիտ հաւասարութեան սկզբունքն է քաջալորում, ուր ներդաշնակուած են անհատի եւ հաւաքականութեան, մեկի եւ ամենըի, մեկ պզի եւ համայն մարդկութեան ձգուամներն ու շահերը. — այդ կը նշանակէ դուանել լաւագոյն ընկերվարութիւնն ու լինել լաւագոյն ընկերվարականը :

Եթէ այս ընդհանուր պահանջներին բաւարարում է ընկերվարութիւնը՝ պիտի լինել ընկերվարական. իսկ եթէ չի բաւարարում, ապա առանց վարանումի ու տատանման յամառ, անողոք ու անհաջտ կորիւ պիտի տանել ընկերվարութեան դէմ :

Եթէ որևէ քաղաքական հոսանք, յանուն որևէ սկզբունքի, ջատագով է հանդիսանում բռնութեան, անհաւասարութեան ու կեղեգման որևէ ձերի, — ապա հաստատ համոզուած պիտի լինել, որ դուք գործ ունէք մէկ մթին ու յետադէմ ուժի հետ :

Անարժէք են խօսքերն ու բառերը — յանախ, գրեթէ միշտ, աւելի ճիշտ՝ միշտ և ամէն անդամ հրապուրիչ, գեղեցիկ ու կաշտոող. կարեորը մէկ որևէ շարժման գործնական արտայայտութիւններն են և նրանց ներքին իմաստն ու էութիւնը :

Ահա այսպէս ըմբոնեց Դաշնակցութիւնն իր գաւանած ընկերվարութիւնը (այսպէս չձեւակերպեց սակայն) և ճիշտ այդ պատճառով նա եղաւ այն քան կենսունակ, այն քան կուռ

ու հզօր :

Եւ իմկապէս . միթէ անարժէք է այն ուշադրաւ երեսյթը . թէ ինչպէս Դաշնակցութիւնը սրանից զեռ տասնամեակներ առաջ այնքան անվարան ձեռվ և այնքան ճշմարտօրէն ըմբռնեց ազգային դատերի օրինաւորութիւնն ու արդարութիւնը (գործնական կեանքի մէջ) , որոնց դէմ ժառացած էր ժամանակի հզօր հոսանքը , Մարգարինդէլսեան գաղափարական զրօշի տակ :

Երեք տասնամեակ առաջ կարելի՞ էր գուշակ լինել ու նախասել . թէ մեր օրերին բովանդակ ընկերվար ընտանիքի մէջ չպիտի լինի և՝ ոչ մէկ հոսանք , որ յանդգնութիւնը ունենայ այլն բացնակատ ազգերի գոյութեան ու նրանց դատերի օրինաւորութեան զէմ խօսելու :

Այսքան կարճ ժամանակաշրջանում և այսքան վճռական ու լիակատար յաղթանակ արդեօք կարելի՞ էր սպասել :

Եւ ապա , եկեղեցական կալուածների գըրաւման ժամանակ , երբ հայ քաղաքական մտքի ծայրայեղ թեսերը խորիմացօրէն մէկ կողմէին քաշւում , որպէսզի իրենց ոյեղափոխական զ գրօշը չարատաւորեն յանուն անկեղեցուն իրաւունքների տարւած պայքարի մէջ , ինչպէս եղաւ , որ վերստին Դաշնակցութիւնն իր ամբողջ կազմակերպական կառուցուածքով յենակ ու զօրավիդ եղաւ այդ պայքարին :

Այդ օրերին արգեսք կարելի՞ էր սպասել .
որ հայ քաղաքական միտքն ընդամենք մի
քանի տարիների ընթացքում պիտի զգաստա-
նայ և սթափուի , մէկդի նետի անբովանդակ
խօսքերի կախարդանքը և յանուն եկեղեցա-
կան կալուածների տարած պայքարը նուիրա-
կան ացնի , իբրև գերազանցութեն յառաջաղէմ
ու յեղափոխական պայքար :

Կարելի՞ էր սպասել , որ յետագային , հայ-
թրքական կռիւների ընթացքում Դաշնակցու-
թեան կատարած հոյակապ գերը . խօսքերի
տակ գոսացած հայ քաղաքական մաքի ծայ-
րայեղ թեւը պիտի համարի իբրև մէկ անհրա-
ժեշտութիւն . որ բղխում էր յեղափոխական
կռւսակցութեան պարտականութիւններից :

Ինչո՞ւ տեղատւութիւնն այսքան լճռա-
կան եղաւ :

Ինչո՞ւ Դաշնակցութիւնը կարեղացաւ
գործնական օրէն այսքան լստակ ու ճիշտ ըմ-
բռնել իր կոչումն ու գերը , ընկերվարութեան
իմաստն ու թելադրանքները :

Պարզ է միանգամայն :

Դաշնակցութիւնը լազմանակով ելաւ
տեսական ու գործնական բաղխումներից , ո-
րովհետեւ իր գործունէութեան ընթացքին ա-
պաւինել էր ընկերվարութեան ոգուն և ոչ
խօսքին , նրա ներքին իմաստին եւ ոչ թէ
տառին :

Նա գոնել էր , որ պալքարին ամեն կարգի

բանութեան դեմ, անկախ միանգամայն այն
բանից, թէ այդ բանուրիւնց որտեղից է զայիս
արգեօք եւ որին դեմ և ուղղաբած, — վանում է
իր յեղափոխական-ընկերվարական պահպակա-
նաւրիւնների մէջ։

Կա՞յ բռնութիւն որեէ տպաւթեան դէմ
իբրև այդպիսին, — ուրեմն պիտի մէկտեղել
ուժերը և բովանդակ ճառակրով ժառանալ արդ
բռնութեան դէմ։

Հալածուածն է որեէ համայնք սուկ այն
պատճառով, որ իր խզմի հարցը նա աը-
նօրինում է այս և ոչ մէկ այլ ազօթատան
մէջ, — ուրեմն պիտի վերջ տալ ամէն անուար-
բերութեան և հարուածներն ուղղել այդ հա-
լականքի դէմ։

Դա՞ւ է նիւթուած որեէ հաւաքականու-
թեան ֆիզիքական գոյութեան դէմ, — ուրեմն
տուած վարանումի պէտք է շոկել ֆակաց և
ընկերվարութեան յեղափոխական դրօշի տակ
արշաւածնք բանալ այդ դաւադրութեան դէմ։

Փակածնք կայ դրուած բերանների վլայ.
արգելուածն է տպա՛տ իսուքը, տպա՛տ հաւա-
քոյթը, զրկուածն է բազմութիւնն իր ան-
կապտելի սեփականութիւնն եղած արդ իրա-
ւունքներից յանուն որեէ սկզբունքի, — ու-
րեմն վերջնականութէն համոզուած պիտի մի-
նել, պիտի հաւատալ առանց ամենափոքր վա-
րանումի, երբեք կասկած չպիտի ունենալ, որ
ընկերվարութեան իմաստին նրա ոգուն նը-

բա բռվանդակ էութեան հակասով բանութիւն
է տեղի ունինում։

Ուրեմն, եթէ ճշմարիս յեզափոխականներ
ու ընկերվարականներ էք գուք, ապա պիտի
հաւաքէք ձեր ուժերը, խաւցնէք ուխտեալ-
ների շարքերը, պարզէք պայքարի դրօչը և
մահացու հարուածը տաք հմայիչ խօսքերի
տակ քօղարկուած արդ վաստագոյն ուժին։

Որովհետեւ, մի անգամ էլ կրկնենք, ըն-
կերվարութիւնը գէմ է մարդկային անկապ-
տելի սեփականութիւնը եղող քաղաքացիա-
կան ազատութիւնների գէմ նիւթ ած հալա-
ծանքին, նա թշնամի է կեղեքման բոլոր ձե-
ւերին, նա իր հիմքի մէջ ժխտում է անհաւա-
սարութեան որևէ սկզբունք, նա ձկտում է մէկ
այնպիսի հասարակակարգի՝ ուր ներդաշնա-
կորէն զուգորդուած են ինքնարժէք և հա-
ւասարժէք անհատի և հաւաքականութեանց,
մէկի և ամենքի, մէկ ազգի և համայն մարդ-
կութեան փոխադարձ շահերն ու ձկտումնե-
րը։

Ահա այսպէս ըմբռանեց Դաշնակցութիւնն
իր որդեգրած դաւանանքի իմաստը. այսպէս
զործեց մէկ երրորդ զար շարունակ և այդ
պատճառով, չնայած իր կրած անվերջ հալա-
ծանքներին և ապրած անսպառ աղէտներին,
մնաց, այսուամենայնիւ, իբրև ամէնէն զօրա-
ւոր ազդակը մեր կեանքի, պահեց իր զաղա-
փարական քերդն առանց նեղքուածքի և ա-

զէտներից նօսրացած իր շարքերը շարունակ խտացրեց նոր ու թարմ հետևորդների հոյակապ շարանով,

Այսպէս ուրեմն,

Ծնկերվարութիւնը պէտի գայ ու պիտի տօնի իր յաղթանակը ազատ ազգերի ազատ երկնակամարի տակ, նա չի կարող իրեն հետ հալածանք բերել, նա մեր ըմբռնած վեհ ու գեղեցիկ դաւանանք չի լինի, եթէ իր յաղթանակը գայ տօնելու ազգային հալածանքների գնով ու ազգութեանց գերեզմանի վրայ:

Սակայն մենք ընդունուած սովորութեան առւրջ տալով, փոխն ի փոխ գործածում ենք շարունակ «հայրենիք» և «ազգութիւն», «ազգային ազատութիւն» և «անկախութիւն» բառերը:

Զատենք այս զաղափարները և յստակօրէն պարզենք մեր զիրքը զէպի հայրենիքի եւ նրա անկախութեան հարցերը, որոնց նուիրուած են մեր այս մի քանի առզերը:

Հայրենիքն ու ազգութիւնը, ազատութիւնն ու անկախութիւնն անշուշտ չափազանց սեբտ ու նուրբ թելերով կապուած են իրար, սակայն նրանք, այնուամենայնիւն, տարբեր են թէ իրեն զաղափարներ ու թէ իրրեւ արժէքներ:

Անկախութիւնը ազատութեան մէկ արտայայտութիւնն է միայն, իսկ հայրենիքն այն միջավայրն է, ուր ազգութիւնն ապրել

է դարերով , ուր նա իր պատմութիւնն է հիւսել և ուր կռւակել է իր ինքնութիւնը յատկանշող հոգեկան ամբողջ հարստութիւնը :

Ինգունել ազգութիւնն ու դէմ դուրս գալ նրա հայրենիքին . այդ կը նշանակէ ջւնջել աջոկ այն , ինչ պրուած է ձախով :

Տրամարանական անհեթեթութիւն է որևէ հալածանք որևէ ազգութեան թակավայրի գէմ , երբ այդ ազգութեան գէմ գործադրուած որևէ բռնութիւն նկատուած է իրրեցացարձակ միստումն ընկերվարութեան ամենէն հիմնադան սկզբունքների :

Սովորական միա'յն նման գէպքում կարող է օգնութեան գալ , եթէ նա . ի հարկէ , իբրև փրկութեան գէնք նկատուի :

Հայրենիքն այն միջավայրն է . ուր ազգութիւնը լաւագուն ձևով կարող է յայտնաբերել իր ստեղծագործական ու շինիչ տաղանդը , ուր նա բոլորանուէր ձևով կարող է փարել իր պատմական վեհ առաքելութեան , ուր նա հաջիստ սրտով կարող է շունչ քաշել և իր թեերբե տարածել :

Ազգութեան պահպանման , զարդացման ու ստեղծագործութեան նախապայմանն է հայրենիքը ու մանաւանդ՝ նրա անկախութիւնը :

Քաղաքական անկախութիւնից դուրս գըծուած բոլոր ու զիները շեղումն են ազգութեանց պահպանման նույնական սկզբունքից . նրանք

դէմ են ընկերվարութեան հիմնական պատման գամելի ինքն նրանց ողունուու էութեան . այդ պարտուղի , անշխտակ և մմին ձամբաները չեն լուսաւորութ այն զաղավարներօվ , որ դաւանում է աշխատառ մարդկութիւնը :

Ազգերը պէտք լինեն աղաս և անկախ , ահա այն մեծ նշանաբանը , որ ցաւով ու երակունքով . անեղ պայքարների ու անսախորնթաց բաղիւնումների զնով մեր դուրս իր ուսերին առած յազմականօրէն բերում է պատմութեան խորքերից :

Ազգերը պէտք լինեն աղաս և անկոր , որովհեաւ այդ է ազգութեանց պահպանման ու զարդարման միակ ճշմարիտ ուղին , այդ է ճշմարիտ բնկերվարութեան յստակ , պարզ , մեկին ու խրօսութ պատգամր :

Աւելին :

Մէկ հիմնաւո՞ւն սիսալ : Որ յատկապէս անձնականութեան հարցում թոյլ է տուել իրեն ընկերվար միտքը ու նուև , ցաւով պիտի ասել . Հ . Յ . Գաշնակցութիւնը , որ առաջ պէտք է սրբազրուի :

Ինչպէս ծանօթ է , ընկերվարական կուսակցութիւնների ծրագրերը սովորաբար բաղկացած են երկու մասից . բուն ծրագրից կամ , ինչպէս ընդունուած է ասել , նուազագոյն բաժնից և ապա՝ առաւելագոյն ծրագրից :

Առաջինի մէջ գծուած են այն ուղիները , որոնք ծառայում են իրրե սուլ միջոց վերջ-

նական նպատակին հասնելու համար, — հետևաբար այդ միջոցները փոփոխական են ուժամանակաւոր:

Իոկ երկրորդ բաժնի մէջ ամփոփուած է վերջնական նպատակը, բոլոր ճիշերի ու ձրգութիւնների վերջնական կայանը, որ, հետեւաբար, անփոփոխ է ու յափառենական:

Իրապէս յափառենական է արդեօք ընկերվարական մեծ ուսմունքը, անփոփոխ է արդեօք այն, ինչ այնքան մոլեգնօրէն դաւանում է աշխատաւոր մարդկութիւնը:

Երբեք և ոչի՞նչ չպիտի՝ փոխութ արդեօք այն վարդապետութիւնից, որ այսօր իր շուրջնունի համախմբած հաւատացեալների հսկայքազմութիւններ:

Զգիտենք:

Այսօր, մե՛զ համար, մարդկային մեր ակա՞ր մտքի առջև չեն գծուում աւելի վառ, աւելի ընդարձակ հորիզոններ: Այն կէտը, ուր վերջանում է մեր հոգու հայեացքը և երկինքը միանում երկրին, — այդ վերջին ու պայծառ կէտը ընկերվար հասարակակարգն է, մեր ձրգութեամսների ու երազանքների վերջին կայանը: Եթէ ասուուածային մէկ հզօր ներշնչումով կարողանայինք կարդալ հեռաւոր գարերի գաղանիքը, եթէ մէկ հրաշածին պայծառատեսութեամբ գիտնայինք թէ՛ ի՞նչ կենցաղաձևներ ու հասարակակարգեր, արդեօք ի՞նչ ուսմունքներ ու վարդապետութիւններ — աւել-

զի՛ վաեմ, աւելի՛ արդար, աւելի՛ վեհ ու ա-
ւելի՛ գեղեցիկ—պիտի գան ընկերվարութիւնը
փոխարինելու, —ապա մենք հենց այսօրուա-
նից բոլորանուէր ձևով կը փարէինք այդ նոր
լերան քարոզին և մեր քայլերն ու դործերը,
մեր պահանջներն ու ձգտումները, մեր կեան-
քի ընթացքը կը գծէինք այդ նոր վարդապե-
տութեան հունով :

Ասացինք սակայն, որ նախագծուած են
մեր հոգու եւ մտքի ահսողութեան սահա-
մանները :

Ընկերվար հասարակակարգը վերջնական
պակռւմն է մեր բոլոր ձգտումների և հան-
գրուանը մեր նպատակների, որովհետեւ նա՛ է
մեր սահմանափակ տեսողութեան վերջին կա-
յանը, Այս ասել է, ուրեմն, որ ծրագրի ա-
ռաւելագոյն բաժնի մէջ, այնտեղ, ուր ըն-
կերվարութիւնն է տեղաւորուած, այդտեղ
տեղաւորուած պիտի լինեն նաև այն հիմնա-
կան գաղափարները, որոնք կազմում են այդ
ուսմունքի ոգին, էութիւնը, որոնք իմաստ են
տալիս նրա գոյութեան, առանց որոնց ըն-
կերվարութիւնը կը լինէր ամէն ինչ, սակայն
չէր լինի այն, ինչ մենք ըմբռնում ենասկա-
նում ենք ընկերվարութիւն ասելով :

Ուրեմն ընկերվարութիւնն իր ջինջ ու
բիւրեղ նկարագիրը, իր վեհ էութիւնը, իր
ամբողջական գէմքը պահելու համար պիտի
տեղաւորուի ծրագրի առաւելագոյն բաժնի

մէջ իր բոլոր հիմնական ու բաղկացուցիչ մասերով ։ Նրա տարրերից և ոչ մէկը, և ո՛չ մէկ պատճառ արանութեամբ չի կարող անջատուել իր հիմնական բռնից և այս կամ այն ձեւի տակ տեղափոխուել մէկ ուրիշ տեղ։

Ծրագրի նուազագոյն բաժնի մէջ պիտի մնայ այն ամէնը, ինչ ծառայում է իրքեւ ոսոկ միջոց վերջնական նպատակին համակարգ, համար, ալտինքն այն ամէնը, ինչ, հետեարար, կրում է ժամանակաւոր բնոյթ և իր էութեան մէջ ենթակայ է փոփոխութեան. իսկ աաւելագոյն բաժնի մէջ պիտի տեղաւորուի ամերողջութեամբ ինքն ընկերվարութիւնը իր բոլոր հիմնական մասերով, այսինքն այն, որ նպատակ է և ոչ թէ միջոց և որ, հետեարար, ենթակայ չէ իր էութեան մէջ որևէ փոփոխութեան և դատապարտուած չէ միայն ժամանակաւոր կեանք ունենալու։

Տարաբախտաբար այս հիմնական սկզբունքները տեղ չեն գտած ընկերվարական կուսակցութիւններից և ոչ մէկի դաւանագրի մէջ. նրանք բացակայում են մինչեւ իսկ Դաշնակցութեան հաւատազրից, մի հաւատազրիր, որ, ինչպէս տեսանք, ընազդական առողջ մըզգումով հայ մեծ քաղաքական կազմակերպութիւնը զրել էր գործունէութեան միանգամայն օւղիղ և ճշմարիտ գծի վրայ։

«... Զգտելով հանդերձ կազմակերպել մեկ, ներդաշնակ, ամբողջական մարդկութիւն

այսօրուան կտոր-կտոր, բաժան-բաժան ու նա-
կամարտ աշխարհին տեղ, ընկերվարութեան
իրազործումը ջի պահնաջում արդի ուրոյն ազ-
գային միութիւնների խսպառ, ծույտամբ . միու-
թիւններ, որոնք իրենց պատմականօրէն ժա-
ռանգած բեղմնաւոր մասնայատկութիւններով
կարող են միայն նոխացնել ապագայ ընկեր-
վար մարդկութիւնը» :

Ահա, օրինակ, այն կտորը, որ ազգու-
թեան մասին տեղ է գտած Դաշնակցութեան
ծրագրի առաւելագոյն բաժնի մէջ :

Ուշիառւշով կարգացէք մեր բերած կտո-
րը, խորամուխ եղէք նրա ներքին իմաստի
մէջ, ասացէք այն, ինչ խոհեմօրէն թերի է
թողնուած,—և դուք կը տեսնէք այդ կտորի
վրայ մարքսիստական դպրոցի հակազդային
ոգու հետքերն ու այն վախը, որ այդ դպրոցը
ներշնչել է իր հակառակորդներին :

«Զդուելով հանգերձ . . . ընկերվարութեան
իրազործումը ջի պահնաջում արդի ուրոյն
ազգային միութիւնների խսպառ, ձուլումը . . . » :

Այլևս չշարունակենք, որովհետեւ այս մէկ
կտորի մէջ արդէն իսկ շատ բան կայ ասուած :

Մեր ընդգծած տողերի տակ թագնուած
է այն վախը, որ մարքսիստական դպրոցը
ներշնչել էր Եր շրջապատին յատկապէս ազ-
գային հարցում և այն չափէն աւելի պատկա-
ռանքի զգացումը, որ կար զէպի «ընկերվա-
րութիւն» խօսքը :

Այսպէս ուրեմն :

Հ . Յ . Դաշնակցութիւնը պաշտպան է հանգիւ-
անում ազգային ուրոյն գոյութեան , որով-
հետեւ ընկերվարութիւնը չի պահանջում (ի՞նչ
սարսափելի բան) նրանց խսպառ ձուլումը :

Այս նշանակում է , որ ընկերվարութիւնն
խսպառ չպահանջելով հանգերձ , մի չափով ,
այնուամենայնիւ , պահանջում է ազգութեանց
ձուլում , և ապա , որ ամենէն դլխաւորն է՝
ծրագրի բանաձեռումից այն տպաւորութիւնն է
ստացւում , որ Դաշնակցութիւնը դէմ չէ ազ-
գութեանց ուրոյն գոյութեան սոսկ այն
պատճառով , որ ընկերվարութիւնն այդ պա-
հանջը չի առաջադրում , այս ասել է միաժա-
մանակ , որ եթէ մէկ մէկ օր ընկերվարութիւ-
նըն այդպիսի մի պահանջ առաջադրէր , ապա
Դաշնակցութիւնն այդ պահանջի առջեւ տեղի
պիտի տար (կոմ կարող է տեղի տալ) :

Պարզ չէ միթէ այն թիւր ըմբռնումը , որ այս
հարցերի ձեւակերպման մէջ հանգէս է բերում
— անշուշտ տեսականորէն — նաև Դաշնակցու-
թիւնը :

Համոզուած կարելի է լինել , որ շատ մօտ
շրջանին այս կարգի բոլոր թիւրիմացութիւն-
ները միանգամ ընդմիշտ պիտի վերանան ոչ
միայն Դաշնակցութեան , այլ և բոլոր այն հո-
սանքների ծրագրերից , որոնք որդեգրած են
ընկերվարական վարդապետութիւնը :

Ազգերի և ընկերվար հոսանքների վերջին
տասնամետակների կեանքն ու պայքարը եկան

մեծապէս զիւրացնելու մի շարք կնճիռների
լուծումը և լոյս սփռելու այն կէտերի վրայ,
որոնք մինչ այդ մութ էին մնացած :

Պարզուեց նաև, որ ընկերվարութիւնն
աշխատաւոր մարդկութեան երազած ուսմուն-
քը չէր լինի, եթէ նա գար ուրոյն աղքերի
ձուլումը պահանջելու՝ այս կամ այն ձեւի
տակ :

Ընկերվարութիւնը չի կարող չձգտել, նա ձգ-
տում է ու պիտի ձգտի կազմակերպել մէկ ու
ներդաշնակ մարդկութիւն այսօրուան կտոր-
կտոր, բաժան-բաժան ու հակամարտ աշխար-
հի տեղ ու այդ նպատակին նա կարող հաս-
նել նաև այն ժամանակ, եթք բոլորանուէր
ձեռվ փարի ազգերի պայքարին, անվերապա-
հօրէն զօրավիզ հանդիսանայ նրանց դոյու-
թեան, պահի ու պահպանի մարդկային հա-
ւաքականութիւնը յատկանչող ազգային այն
միութիւնները, որոնք—ասենք իր իսկ ծրա-
դրի խօսքերով—իրենց պատմականօրէն ժա-
ռանգած բեղմնաւոր մասնաւատկութիւններով
կարող են միայն ճոխացնել ապագայ ընկեր-
վար մարդկութիւնը :

Սակայն հիմնական թերացումն այստեղ
չէ բնաւ :

Կարելի է, վերջապէս, ընդունել, որ
գրչի մէկ չարաճճի խաղով «իսպան» խօսքը
տեղ է գտել այնտեղ, որտեղ նա իսպան տեղ
չպիտի դանէր :

Կարևորն ու էականը , բնորոշն ու յատկանշականը մտածողութեան այն սկզբունքային ընթացքն է , որ , ինչպէս քիչ վերը շեշտեցինք , շօշափած հարցերի լուսաբանութեան մէջ հանգէս է թերում մեր ծրագիրը :

Ընկերվարութեան հանդէպ ազգութիւնները , ըստ ծրագրի , զրուած են պարզապէս ըստորագաս վիճակի մէջ : Ըստ ծրագրի , թելազրո՛ղը , հրահանգողն ու պարտազրո՛ղը ընկերվարութիւնն է , իսկ ենթական ու կամակատարը՝ ազգութիւնը :

Ազգութիւնը , ըստ ծրագրի , ամօթխածքըն տեղ է դաել կուսակցական դաւանագրի առաւելագոյն բաժնի մէջ , որովհետեւ զրանգէմ չէ ընկերվարութիւնը :

Այսպիսով , փոխունել են գերերն ու տեղերը և ընկերվարութիւնն իր ստորագաս վիճակից դուրս գալով , գերիշան դիրք է գրաւել ազգութեանց հանդէպ :

Պարզ հասարակակարգը — մինչև իսկ ընկերվար — որ կեանքի է կոչուում պահելու եւ պահպանելու համար յարատե արժէքները (ունաել ազգային) , մտածողութեան մէկ տարօրինակ , անըմբռնելի ու սխալ ընթացքով յաւիտենականութեան ընոյթ է ստացել և գարձել ինքնանպատակ :

Սակայն չէ որ հասարակակարգերը շարունակաբար փոփոխուել են պատմութեան ընթացքին :

Չէ՞ որ նրանցից այն, որ երեկ նպատակ էր, յետագային, ապրող սերունդների համար, գարձել է պարզ միջոց մի այլ, աւելի բարձր հասարակակարգի հասնելու համար: Ու չէ՞ որ ազգերը ոչ միայն չեն չքացել (խօսք չի կարող լինել, ի հարկէ, ֆիզիքական բնագույնութիւնների մասին), այլ և դարերի ընթացքում կուտակել են պատքարի ու գոյութեան աւելի զօրաւոր զէնքեր, փարթամանալով իրենց թէ՛ ներքին բովանդակութեամբ ու թէ՛ արտաքին ձևերով:

Եւ միթէ պարզ չե՞ն այդ հարցերի պատասխանները:

Ազգերը մնացել են ու պիտի մնան իբրև մարդկային հաւաքականութիւնը յատկանշող յառաջադէմ ազգակներից մէկը, իսկ հասարակակարգերը եղել են ու պիտի լինին այդ հաւաքականութիւնը լաւագոյն ձևով սպասաւորող միջոցներից մէկը, այսօր՝ այս, իսկ վազը՝ մէկ այլ հասարակակարգի միջոցով՝ աւելի՛ արդար, աւելի՛ փարթամ, քան իր նախորդն էր:

Աւելին չէ ու չի կարող լինել նաև ընկերվարութիւնը:

Այսօր նա մեր երազանքների վերջին կայանն է, որովհետեւ աւելի հեռուն անկարող ենք տեսնել, սակայն վազը, դարեր ու տասնեակ դարեր վերջ, նա պիտի դառնայ պատմութեան անցած ճանապարհի մէկ սովորա-

կան փուլը, նոր ու աւելի բարձր աստիճանն-ների հասնելու համար:

Որովհետև, փելիսովիայական լայն ու ըն-դարձակ առումով, իդէալը անհսանելի պի-տի մնայ միշտ մարդկութեան համար, որին նա միշտ պիտի ձգտի, Որովհետև հարազատ թարգմանը մտրդկային ներքին էութեան ե-զել է ու պիտի մնայ Լեսինգեան այն մարդը, որ նախընտրում է միշտ ձգտել ճշմարտու-թեան, սակայն նրան երբեք չհասնել:

Որովհետև մէկ օր, վերջապէս, այս նորն ճակատագիրը պիտի ունենայ նաև ընկեր-վար հասարակակարգը, նա պիտի դադարի մադկային որոնող մտքի երանական ազրիւրը լինելուց, նա պիտի ընկնի ու խորտակուի գալիք գարերի անխմանալի ձգտումների առջև ու ճանապարհ գծի գէպի այն հորիզոնները, որ յետադային ու յետագայ ժամանակները պիտի բանան մարդկութեան համար:

Տուեալնե՛ր, հիմունք և իրաւունք չունենք սակայն այս նոյն խօսքերը նաև ազգութեանց մասին ասելու,

Եթէ ազգերը հրով ու սրով չպիտի բնա-ջնջուեն, ապա նրանք յարանունօրէն զար-գանալով ու փարթամանալով, պիտի մշտա-պէս ապրեն, իբրև մարդկային հաւաքակա-նութիւնը յատկանշող մէկ անխմանալի, խոր-հրդաւոր և գաղտնալի ձև:

Որովհետև միշտ և սմէն անգամ ճապո-

Նական հրավառ գետինը , բրիտանական մաս-
ուախլապատ երկինքը , սքանդինաւեան խո-
ժոռ ու ցրտաշունչ բնութիւնը , եղիպատական
անծայրածիր անապատները , իտալացու ջինջ
ու կապուտօնկ երկնակամարն ու հայկական
կարկաչահոս ջրերը , ձիւնափառ սարերն ու
անդնդախոր ձորերը ա'յլ հնչիւն , տարբե՛ր հո-
գի , մէկ ուրի՛ շնկարագիր ու բնութիւն պիտի
կերտեն իրենց բնակիչների համար :

Մարդկային հանճարը , նաև հազարաւոր
տարիներ յետոյ , պիտի արտայայտուի ու ըս-
տեղծագործի ազգութեանց միջոցով , ու նաև
հազարաւոր տարիներ վերջ բրիտանական ազ-
գային հանճարը պիտի խօսի մէկ նոր ու ինք-
նակերտ Շէքսպիրի գրչով , որ տարբեր պիտի
լինի իտալական ապագայ Դանտէի գրչից :

Արդ , քանի որ այսքան տարբեր են լն-
կերվար հասարակակարգի և ազգութեանց
արժէքները թէ՛ պատմական , թէ՛ հասարակա-
գիտական ու թէ՛ զուտ մեթոդաբանական տե-
սակէտից , ապա առանց ամենափոքրիկ վարա-
նումի իսկ մէկ կողմ պիտի նետել խօսքերի
կախարդանքը և յատակօրէն պարզել այն տուր-
քը , որ ընկերվար ծրագրի մէջ պիտի տրւի Աս-
տուծուն և կեսարին :

Եթէ գերադաս ու ստորադաս վիճակների
խնդիր կարող է լինել , ապա անկասկած է ,
որ գերադաս վիճակը պատկանում է ազգու-
թեան , իսկ ստորադասը՝ ընկերվարութեան :

Ո՞չ թէ ընկերվարութիւնն է , որ . ձգտելով
հանդերձ կազմակերպել մէկ , ներգաշնակ ,
ամբողջական մարդկութիւն այսօրուան կտոր-
կտոր , բաժան-բաժան ու հակամարտ աշխար-
հի տեղ , չի պահանջում ազգային միու-
թիւնների խսպառ ձուլումը և այդ պատճա-
ռով միայն ազգութեանց պահպանումը դառ-
նում է մեր նպատակներից մէկը և ամօթ-
խածօրէն տեղ զբաւում ծրագրի առաւելա-
գոյն բաժնում , այլ ազգութիւնն է , որ , ձըգ-
տելով մարդկային համակենցաղի աւելի՛ փար-
թամ , աւելի՛ ճոխ , աւելի՛ վեհ ձեւերի , որ-
դեզրում և դաւանում է ընկերվար ուսմուն-
քը , իբրև դէպի այդ նպատակը տանող մէկ
վարդապետութիւն :

Ու պարզ է ինքնին , որ պատմականօրէն
ժառանգած իրենց բեղմնաւոր մասնայատկու-
թիւններով ապագայ հասարակակարգը ճո-
խացնող ազգութիւնները , եթէ տեսնեն , որ
իրենց այս ձգտման դէմ է ընկերվարութիւնը ,
ապա նրանք կը ծառանան նաև ընկերվարու-
թեան դէմ , առանց վայրկեան իսկ տատան-
ուելու :

Որովհետեւ թոյլատրողը , հրահանգողն ու
պահանջողը , — մէկ անգամ էլ կրկնենք . — ազ-
գութիւնն է , և ոչ թէ այս կամ այն գաւա-
նանքը . դաւանանքը՝ ա'լդ թելազրանքների ,
հրահանգների ու պահանջների մէկ խտացումն է
միայն և ոչ աւելին . դաւանանքն ազգութիւնից

ո՞չ դուրս է և ո՞չ վեր, այլ նա ազգութեան մէջ է, նրանից է բզիտում, նրանով կեանք առնում և նրա մէջ էլ վերջ գտնում:

Ահա այս սկզբունքն ամենայն յատակութեամբ ու պայծառութեամբ, —որքան, ընդհանրապէս, պայծառ ու յստակ կարող է լինել մարդկային լեզուն, —տեղ պիտի գտնի ծրագրի առաւելագոյն բաժնի մէջ:

Սակայն մենք շարունակ ազգութեան շուրջն ենք պտտում, առանց անկախութեան մասին խօսելու:

Ասացինք, որ չի կարելի ազգութեան պաշտպան հանգիստանալ և նրա հայրենիքի դէմ պայքարել. ու չի կարելի հայրենիքի անձեռնմխելիութեան սկզբունքը որդեզը, աւելացնենք անմիջապէս, առանց այդ հայրենիքի անկախութիւնը պահանջելու:

Աւելին:

Ազգայնօրէն անկախ ապրելու իրաւունքը պիտի տարածուի ազգային ամբողջականութեան վրայ թէ՛ հայրենիքի մէջ և թէ՛ հայրենիքից դուրս:

Ազգութիւնն իր բոլոր ճիւղերով պիտի մընայ ու պիտի պահուի իրրե անմասնատելի մէկ ամբողջութիւն:

Ապագան դիւրութեամբ կը գծի անշուշտ այն ձեերը, որոնք հնարաւոր կը դարձնեն այս սկզբունքի լիակատար կիրառումը ուղեալ ազգութեան նաև այն հատուածների նը-

կատմամբ, որոնք պատմական բազմապիսի պատճառների հետևանքով պոկուած են իրենց բունից և ապրում են հայրենիքից դուրս, տարբեր հորիզոնների տակ :

Սակայն այսօր իսկ պարզ է այն լուծումը, որ գծուած է հայրենիքի մէջ ապրող աղքութեանց համար :

Ինչպէս անվերաքննելի է ազատութեան սկզբունքը (խօսելու, գրելու, գաւանելու, հաւաքուելու, շարժուելու և լն. և լն.) անհատի համար՝ պետութեան մէջ, նոյնպէս անվերաքննելի է անկախութեան սկզբունքը (աղատօրէն, անկախաբար և ազգովին ապրելու, զարգանալու, ստեղծագործելու և լն.) աղքութեան համար՝ համամարդկային մեծ ընտանիքի մէջ :

Որովհետեւ ազգութիւնը ոչ միայն իրաւունքների օքեկատ է (ազգութեան պատկանող անհատների համար), այլ և իրաւունքների սուբ'եկտ (մեացեալ ազգերի և համայնմարդկային միացելութեան հանդէպ) :

Ազգութիւնն իրեւ մարդկային հաւաքականութիւնը յատկանշող մէկ ուրոյն ձեւ, հանդէս է գալիս ազգերի գոյութեան մրցագաւառում իրեւ մէկ, անբաժան և լրիւ ամբողջութիւն, հրապարակ է իջնում իրը և ֆիզիքական անձ՝ իր անվերաքննելի պահանջութ:

Անկախութիւնը—ազգերի անկապտելի իրաւունքն է, նրանց անվերաքննելի ու նը-

ւիրական սեփականութիւնը :

Անկախութիւնն ազգ-սուբ'եկտի ազատութեան միակ ձևն է, անկաշկանդ ապրելու եւ ստեղծագործելու միակ միջոցը :

Ու քանի որ անկախութեան սկզբունքը ազգութեան մէկ ալսքան կարեոր յատկանիչն է — երբեք փոփոխուող ու մշտապէս ապրող, քանի որ ազատութեան սկզբունքը մէկն է մարդկութիւնը յարատե նպատակներից, եղել է ու պիտի մնայ, ուստի նաև անկախութեան սկզբունքը, իբրև ազգ-սուբ'եկտի ազատութիւնը մարմնաւորող միակ ու անխաթար ձևը, պիտի մնայ ազգութեան նպատակների աշխարհում:

Այս իմաստով ընկերվարութիւնը մեզ համար ընդունելի լինելու համար պիտի լինի ոչ միայն աշխատաւորական, ազգային և երկրագործական, այլև և, եթէ կարելի է այսպէս ասել, անկախական, — դաշնակցային, Անկախական այն իմաստով, որ ամէն մէկ ազգութեան լիակատար քաղաքական ազատութիւնը պիտի նկատուի իբրև այդ ազգի (և ոչ ուրիշի) անբռնագատելի իրաւունքն ու անվերաքննելի սեփականութիւնը, որի տէրն ու դատաւորը ինքն է և ոչ ուրիշը, և դաշնակցային ճիշտ այն ըմբռնումով, որ ազգերը մէկ, ներդաշնակ և ամբողջական մարդկութիւն կազմելու համար հանդէս պիտի զան իբրև հաւասարարժէք և իրաւահաւասար ազատ միութիւններ և իրենց ազատ կամքով ու դաշնակցային հիմերի վրայ տեղաւորուեն համամարդկային մեծ գերդաստանի մէջ :

Անկախութեան պահանջն այս իմաստով
ահա ընկերվարութեան մէկ անբաժան մասը
պիտի դառնայ եւ իրեւ այդպիսին տեղաւոր-
ուի ծրագրի առաւելագոյն բաժնի մէջ :

Այս տեսակէտից անխոցելի չէ ընկերվար
կաւակցութիւններից և ոչ մէկի դաւանանքը .
պակասաւոր է նաև Դաշնակցութեան ծրագիրը :

Մէկ տարօրինակ ըմբռնուժով ազգու-
թիւնը , ինչպէս տեսանք , տեղ է դտել կու-
սակցութեան նպատակների աշխարհում (թէն
... ընկերվարութեան թոյլտուութեամբ) , իսկ
հայրենիքի գաղափարն ու այդ հայրենիքի ա-
զատութեան պահանջը մնացել են այդ նոյն
դաւանագրի նուազագոյն բաժնի մէջ , ուր
տեղաւորուած են դէպի վերջնական նպատակ
տանող (ու փոփոխական և ժամանակաւոր
կեանք ունեցող) միջոցները :

Ազգութեան հետ մէկտեղ նաև անկա-
խութեան գաղափարը պիտի դառնայ աշխա-
տաւոր մարդկութեան մշտատե նպատակնե-
րից մէկը և տեղաւորուի նրա ամբողջական
դաւանագրի մէջ :

Ընկերվարութիւնը պիտի դառնայ նաև
անկախութեան դաւանանք :

Սիսալ չհասկացուենք սակայն :
Եկը խօսքն անկախութեան սկզբունքի մասին
է . բայց ոչ՝ այդ սկզբունքի կոնկրետ կիրա-
ռութեարի :

Հաւասարութեան գաղափարը մէկն է
ընկերվարութեան հիմնական տարրերից և
այդ պատճառով այդ գաղափարը տեղ է գը-
տել ծրագրի առաւելագոյն բաժնի մէջ , սառ-

կայն նրա իրագործման միջոցները տեղաւորուել են այդ նոյն ծրագրի նուազագոյն բաժնում, որովհետեւ մարանչող մարդկութիւնն այսօր՝ այս, իսկ վաղը՝ բոլորովին այլ միջոցներով պիտի ձգուի այդ հաւասարութեան իրականացման :

Ըսկերվարութիւնը բացարձակապէս ժրիստում է կեղեքման սկզբունքը . ուստի նա այդ սկզբունքը յախարարում է իրքեւ իր անվերաքննելի նպատակներից մէկը : Սակայն այսօր նա ձգում է կեղեքման այդ ձեւերը վերացնել՝ ութ ժամնայ բանուորական օրուայ, աշխատավարձի նուազագոյն սակէի, այլև այլ աղանովագրական հիմնարկութիւնների և այլ նման միջոցների օգնութեամբ, ուստի նա այդ միջոցները — միշտ փոփոխական և միշտ ժամանակառու — սկանում է ծրագրի նուազագոյն բաժնի մէջ, ուր վաղը, նրանց փոխարէն, պայքարի այլ միջոցներ (նոր նպատակը հետապնդող) պիտի գտն տեղ դրաւելու :

Ազգութիւնը յարատեւ արժէք է և այդ պատճառով նրա գաղափարը գարձած է ինքնանպատակ և տեղափոխուած ծրագրի առաւելագոյն բաժինը, իսկ ազգութեան ողանպանման միջոցները՝ մայրենի լեզուի կիրառում (գլուխում, գատարանում և պետական այլ հիմնարկութիւններում), ազգային այս կամ այն սովորոյթի պահպանում, պետական քիւդէից մի որոշ զումարի յատկացում այս կամ այն ազգութեան կուլտուրական նպատակների համար ելն, ելն, — այս բոլորը, իրեւ

ժամանակաւոր միջոցներ, տեղափոխուած են
ծրագրի նուազագոյն բաժինը։ Չերկարենք։

Ահա այսպէս պիտի լինի նաև անկախու-
թեան հարցում։

Անկախութեան պահանջը, իբրև հիմնական
սկզբունք, իբրև պայքարող ազգութեան վեր-
ջին կարան, իբրև մէկ անփոփոխ ու մշտատե-
նպատակ տեղ պիտի դանի ընկերվար կուռակ-
ցութեան ծրագրի առաւելագոյն բաժնի մէջ,
իսկ այդ անկախութեան իրականացման կրնկ-
րետ ձևերը (այսօր՝ ինքնավար, վաղը՝ ֆետե-
րատիվ կամ մէկ այլ ձևով) եղել են ու պի-
տի մնան այդ նոյն ծրագրի նուազագոյն բաժ-
նում։

Թէ որքան արգար ու անխոցելի են մեր
դիտողութիւնները, — այդ ցուց է տալիս նաև
այն աննախընթաց վերիվայրումը, որ տեղի
ունեցաւ Ռուսաստանում, բոլշեվիկեան տի-
րապետութեան շրջանին։

Ընկերվար մտքի ամէնէն «Ճախ» թէը
(անուանապէս անչուշտ) ոխերիմ հակառա-
կորդն էր ազգութիւնների ու նրանց անկա-
խութեան ձգուումի։

Այն երանելի օրերին, երբ բոլշեվիկները
զեռ ևս սոցիալ-դեմոկրատներ էին, նրանց հետ
անկարելի էր բերան բանալ ազգութեանց եւ
նրանց քաղաքական դատերի մասին։

Նախապատերազմեան ըոլշեւիզմը լրջօրէն
այդ հարցերով զբաղուելը աւելորդ աշխա-
տանք էր համարում։

Այն ըմբռնումն էր իշխողը թէ ընկերվա-

բութիւնն անմիջական աղերս չունի ո՞չ աղ-
գութեանց և ո՞չ էլ նրանց գատերի հետ ։ Ըս-
կերվարութեան նպատակներից դուքս էին նը-
կատում այդ կնճիռները, որոնք պիտի ապ-
րեն և բարակեն այնքան ժամանակ, որքան
ժամանակ ապրում և յարատեռում է ինքը
մասնաւրական տնաեսութիւնը ։

Մարքսիզմի թունաւոր ու բացատական
սպակեցութիւնը և ո՞չ մէկ հոսանքի վրայ այն-
քան շերզօք ու չօչափնչի չնդաւ, որքան
ուսումնան սովորակ դեմոկրատիայի ։ Քաղա-
քական և ո՞չ մէկ հոսանք՝ բովանդակ ըն-
կերվարական բանակում՝ այնքան ախանձե-
լի հաւատարմանթեամբ չ'ընդօրինակեց մարք-
սիզմի տառը՝ վիխանակ ոգուու, կմախքացած
դօքմիւները՝ վիխանակ ներքին իմաստին,
որքան նոյն ուռաւ սոցիալգեմոկրատիան ։

Այս այլ այգակ, նեխող ու սպանիչ երևոյթ և
ների պատճառակերը թերեւս պիտի որոնել նաև
առաջական կեանքի յետամեացութեան մէջ ։

Մարքսիզմը դուրսանի բնոլիթն առաւ ուռ-
սական կեանքի համար ։

Մարքսիզմի հանդէս ցոյց տուած քննա-
կան վերաբերումը նկատուեց իրեն սրբապղ-
ծութիւն և բնկերվար ամէնէն մէծ առաքի-
նութիւնը համարուեց այն կապկային թու-
թակումը, որ ուսա սոցիալգեմոկրատները
թուլ էին սալիս իրենց՝ հիմնագիրների խօսքե-
րը և ոյնութեամբ ու տաղտկալի օրէն շարունակ

Կրկնելով :

Նաև սրանով պէտք է բացատրել այն թշնամական վերաբերումը, որ ռուսական սոցիալ-դեմոկրատները ունեցան դէպի ազգային հարցը : Այս թշնամութիւնն այնքան բացայայտ էր և մարքսիզմի ազգեցութիւնն այնքան հզօր ու տիրական, որ մինչև իսկ ռուսական իրականութիւնը, այդ բազմացեղ, բազմալեզու և բազմակրօն երկիրն իր ազգային բացատիկ պունեզութեամբ բնաւ որոնումների խման չեղաւ «գոգմա»-ին փարած ռուս մարքսիստական մտքի համար :

Աննկատ չանցաւ, ի հարիե, նաև այն հանգամանքը, որ . ինչպէս ճշտօրէն նկատում է իր գրքոյկներից մէկի մէջ Պլեխանովը, ռուս ժողովուրդը գործնականօրէն չզգաց և չապոեց—թէ՛ զիրքով ու թէ՛ թւով—ազգային հարցի իմաստը, տիրականօրէն իշխող ռուս ժողովրդի համար գոյութիւն չունեցաւ ազգային հարցը և նա կարծեց (անշուշտ առաջ և ոչ հիմա), թէ այդ հարցը գոյութիւն չունի նաև ուրիշների համար :

Այգպէս էր սակայն երեկ, անցեալի մէջ, ընդամէնը մի քանի տարիներ առաջ :

Մասնաւորաբար մեծ պատերազմն ու յատկապէս հոկտեմբերեան յեղաշրջումը հիմնի վեր դրին ամէն ինչ գաղափարների և հակացողութիւնների նաև այս բնագաւառում :

Ծուբական սոցիալ-գեմոկրատիան, յան-

ձինս բոլշեւիզմի , Առւրք Հոգու մէկ չարանձի ներշնչումով դարձաւ . ամէնէն «հաստատակամ» , «անվերապահ» և «մոլի» պաշտպանն ազգութեանց և նրանց զարերի :

Միանգամ ընդմիշտ մոռցուեցան ոռւս և հայ բոլշեւիկների այն թօթովանքները , որով ազգերն իրաւունք ունէին «ինքնորոշուելու» միայն . . . ինչ որ անորոշ , անբովանդակ ու անջիղ «կուլտուրական» պէտքերի համար , իսկ աւելին . . . յանցագործութիւն էր արդէն , անարդանք՝ և՝ յեղափոխութեան և՝ ընկերվարութեան հասցէին :

Անյայտութեան ծոցից ազգեր ծնունդ առին (ամբողջ տասնեակներով) . մեծաքանակ ապրանքի ձեւով) եւ «լիազօրուեցին» անկախիկեանքի ամէնէն բացարձակ իրաւունքներով :

Ազգային ամէնէն վառ երեւակայութիւնն իսկ ոռւսանպատակ ազգերի համար չէր զծել ինքնօրէն կեանքի այնքան ընդարձակ հորիզոններ , որպիսին արաւ ոռւսական սոցիալդեմոկրատիալի բոլշեւիկեան թեր :

Արաւ անշուշտ խօսքով , առ այժմ ոչ անկեղծօրէն , պարզապէս իարդախ և ստորնկատումներով :

Սակայն մեզ հետաքրքրողը այդ չէ :

Կարեորը՝ քննութեան ենթակայ հարցի լուսաբանութեան տեսակէտից այն է , որ զարգափարօրէն տեղի տուաւ ազգերի յաղթական երթի առջենա՛կ ոռւսական բոլշեւիզմը :

Տեսական և գործնական պարբարի մէջ պարտուեց նա, թափեց իր հին ու մաշած զէնքերը և անձնառուր եղաւ այն տարերքին, որ ազգութիւնների կենսալիր, հոլակապ ու հրաշագեղ վերածնունդ է կոչւում:

Փոյթ չէ, թէ ռուսական աշխարհակալութիւնը վերահաստանելու համար, բոլշեւիզմի այսօր պարզապէս կեղծում ու ստում է, յայտարարելով իրեն իրեւ պաշտպան ազգային դատերի:

Կարեռը, էականն ու նշանակալիցը այն է, որ նա գաղափարօրէն այլես ոյժ չի զդում իր մէջ, անցեալի նման հրապարակով զէմ արտայայտուելու ազգային դատերէն, իսկ այս արդէն չափազանց մեծ ու խոստմնալից յաղթանակ է ինքնին:

Ազգերի ազատագրութիւնն ու նրանց անկախութեան գաղափարը այսպիսով սկսւում է տիրականօրէն իշխան բոլոր այն հոսանքների վրայ, որոնք իրենց հոգեոր սնունդը շարունակում են առնել—փաստօրէն կամ անուանապէս—ընկերվարութեան գաղափարական աւագանից:

Այսօր համարձակ կարող ենք յայտարարել, որ ազգութիւնները մարդկալին մէկ հատուածի մէջ, ընկերվար բանակում, բացայլութշնամիներ այլես չունեն:

Ով իրեն ընկերվարական է յայտարարում և միաժամանակ շարունակում ատամ կրնտա-

ցնել վերածուող և անկախութեան ձգտող
ազգերի դէմ՝ նու ոյդ անուժ է քօզարկուած
ձևով, դաւուժ ու գաւագրում է ծպտեալ վի-
ճակի մէջ, ժահը ու ժանդ է թափում խար-
դախ, ստոր ու կեղծ ճանապարհներով :

Բաց ու բացնակատ պայքար, ընկերվար
քոչի տակ, այլևս անկարելի է ազգերի դէմ
տանել :

Այլեւ չկան պիդնուկ», «անօդնական»,
«եզազլուխ» ու «ըէակցիոն» ազգեր, այլ
կան ընդհանրապէս ազգեր, ամենքն էլ, ըստ
կորանի գեղեցիկ խօսքի, Աստուածանից այս
աշխարհի վրայ, ամենքն ալ արժանի անկա-
խութեան և ազատութեան,

Այլեւ պէտք չկալ անպայման 12 միլիոն
դառնալու, որպէսզի «դոգման» տուեալ ազ-
գութիւնն արժանի համարի անկախութեան,
այլ կարելի է 12 միլիոնից 12 անգայ քիչ լի-
նել թւով ու նորէն իրաւունք և պարտակա-
նութիւն ունենալ ձգտելու ճշմարիտ և լիա-
կատար ազատութեան և անկախութեան :

Այդ իրաւունքն ու պարտականութիւնն
ունի նաև հայ ժողովուրդը :

Պայքարել յանուն Հայաստանի անկա-
խութեան, այդ կը նշանակէ ջանակիրը լինել
աշխատաւոր մարդկութեան լուսաւոր գաղա-
փարների, այդ կը նշանակէ զօրավիգ հան-
գիսանալ այն վեհ ու գեղեցիկ պայքարին, որ
այսօր տարւում է ընկերվար գրօշի տակ :

Հայաստանի անկախութեան պահանջը բըդիում է պատմական անցքերի խորհրդաւոր ընթացքից, այն վեհ սկզբունքից, որ ազգերը՝ ստորագաս ու անազատ մղում ու տանում է դէպի լուսաշող ապագայ, ուր չկան իշխող և իշխուող ազգեր, այլ կան հաւասար ազգեր։

Հայաստանի անկախութեան պահանջը թելադրանքն է ճշմարիտ ընկերվարութեան, որ ձգտում է և կարող է իրականանալ ազատ ազգերի ծոցում և ոչ նրանց գերեզմանի վրայ։

Անկախութեան է ձգտում նաև ինքը, աշխատաւոր ու նահատակ հայ ժողովուրդը։

Որովհետեւ միայն անկախուրեան պայմաններում մեր երկիրը կարող է Հայաստան դառնալ, իսկ մեր ժողովուրդը՝ հայ մնալ։

Անկախութեան պայմաններում է միայն, որ հայ ժողովուրդը կարող է ազատօրէն ըստեղծագործել և պատմականօրէն ժառանդած իր բեղմնաւոր մասնայտկութիւններով ճոխացնել ապագայ ընկերվար հասարակակարգը։

Միայն իրավէս անկախ Հայաստանն է, որ միանգամ ընդմիշտ վերջ կը տայ հզօրների արիւնուուշտ և աշխարհակալ կոփւներին հայկական հողերի վրայ։

Որովհետեւ քանի գեռ հայ ժողովուրդը չէ տիրացած իր նուիրական սեփականութեան, մինչ այդ աշխարհակալ և արիւնալի պարքար-

Ները հզօրների միջև անպակաս պիտի լինեն
մեր հայրենիքի շուրջ, այդ հայրենիքին՝ այդ
թուղթունունով ոչ ոքի պատկանող իրին տի-
բանալու համար :

Ի՞նչպէս ամէն տեղ, այնպէս նաև մեր հայ-
րենիքի մէջ հզօրների աշխարհակալ թուրը մի-
անգամ ընդմիշտ կը ջախջախուի . եթէ միայն
հայկական հողերի վրայ կեանք առնի մարտրն-
չող հայութեան գարաւոր երազը, նրա ան-
կախութեան շէնքը :

Միա՛յն այդ ժամանակ տեսական կը լինի
խաղաղութիւնը մեր երկրում, ազատութեան
արեւ միա՛յն անկախութեան երկնակամարից
ձշմարտօրէն կը լուսաւորի մեր հայրենիքի գո-
յութեան ուղիները, միա՛յն անկախութեան
պայմաններում հայութիւնը կը ստեղծագոր-
ծի և մէկ աննախրնթաց թափով կը լծուի իր
լուսաւոր պայքարին :

Ահա թէ ինչու անկախութեան պահանջը
աշխատաւոր հայ ժողովրդի նուիրական նպա-
տակներից մէկը պիտի գառնայ: Նա պիտի
կազմի հայ ընկերվար մտքի անբաժան սե-
փականութիւնը և, իբրև այդպիսին, իբ-
րև մէկ տեսական և մեայուն արժէք, տե-
զաւորուի նաև հայ կեանքի հզօր ընկերվար
հուսանքի՝ Հ. Յ. Դաշնակցութեան գաւանա-
զրի առաւելագոյն բաժնի մէջ,

Աշխարհակալ բոլշևիզմի դաւագիր խա-
ղերը ստորագաս ազգերի ու նաև Հայաստանի

անկախութեան գաղափարի հետ ինքնին դալիս
են ասելու, որ Հայաստանի հաստատ քայլ-
ուածքով ուրք կը գնի ճշմարիտ վերածնողի
ճանապարհի վրայ այն ժամանակ միայն,
եթե նա իրապէս ազատ և անկախ կը լինի :

Ահա պայքարի այն միակ ուղին, որ զբ-
ծուած է մեր վերածնուռադ հայրենիքի տոֆու:

Զգուել Հայաստանի անկախութեան, պայ-
քարել այդ անկախութեան համար և տիրա-
նալ նրան, — այդ կը նշանակէ մէկ լուսաւոր
յաղթանակով ևս պատկեր մարզկային պատ-
մութիւնը, լաւագոյն տուրքը տալ ընկերվար
վարդապետութեան, ոկիզբը դնել Մերձաւոր
Արևելքի իրական ազատազրութեան և անդարր,
ազատ ու խաղաղ պայմանների մէջ հայու-
թիւնը լինել իր լուսաւոր և ստեղծագործ ա-
ռաքելութեան :

Քանի այս չէ եղած, — պատրանք է, սին ու
զատակ ցնորք, պարզ երազ միայն այն ա-
մէնը, ինչ հիւսում է մեր հայրենիքի ու մեր
ժողովողի վերածնուղի շուրջ :

Ու որպէսզի գորերի թելազը անքն ու սե-
րունդների երազն իրականութիւն գառնայ,
պէտք է, անհրաժեշտօրէն պէտք է որ ան-
կախութեան պահանջը մարտնչող հայութեան
քաղաքական տեսակէտը զառնայ :

Դառնա՛յ այն կէտք, որտեղից բացւում են
հայ ժողովրդի առջև պատմութեան ընդարձակ,
լուսաշող ու վարդապոյն հորիզոնները :

ԳԻՆ 75 ՍԱՆՏԻՄ